նշանակութիւնն գուշակուի և միջին պարուց վարդապետի մի՝ չարագործ մարդկան համար Նեռնագործ ըսելէն։ Օտարաց մէջ այս անուան նմանութիւն մի գտուի հիւսիսային Գերմանացւոց քով, Նոռն, Nornes, որով կ'իմանային երեք վհուկ յատուկ առանձին անուամբք, երկրիս կենդրոնում կանգնած, Հացի ծառի մի արմատին տակ, և Յունաց Պարկայից պէս գրէին մարդկան բաղդը. մէկն՝ զներկայն, միւսն, զանցեալն, երրորդն այլ զապագայն. — հեռաւոր նմանութիւն մի Աոնակի անուան և գործոյ։ Նոր հետաքննինք բեւեռաշրջաց՝ համարին Նեռ անուն մի կարգալ, իբրև դժոխական չաստուած մի. բայց պատոնք բաւական չեմք համարիր մեր Նեռն անունը ստուգաբանելու։

(Շարայարելի)

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ

Որչափ ինչ որ մարդիկ կը համարին թէ գիտեն, այն իրենց չգիտցածին փոքրիկ մասն է. մարդուս գիտութիւնն այնչափ խառն է սխալանաց հետ՝ որ կարելի է ըսել թէ չի գիտեր՝ քան թէ գիտէ։

Ցեմիստիոս

Ընթեռնուլն՝ ստուգիւ իմաստնոց հետ կենակցիլ մ'է, ընդ հակառակն աշխարհիս հետ կենակցիլն՝ գրեթէ յիմարաց հետ կենակցիլ մ'է։

Բակոն

Քիչ գիրք կը ծառայեն գիտութեան լաւ համբար մի պատրաստելու, սակայն կարեւոր է լաւ ընտրողութիւն և լաւ հանճար։

Սալվինի

Գրեթէ ամենայն հեղինակ նման են խայտաճամուկ վերարկուի մի, որոյ գոյնն առնուած է աստի ու անտի, և որպէս զի անոնց գէշ չըսենք՝ հմտութեան վայելուչ անունը գտած եմք, անոնց փոքրիկ գողութիւնները ծածկելու համար։

Գոթթի

Սոսկ յիշողութեան հմտութիւնը, անկարգ կոյտ մ'է բարւոյն և վատին, ազնուին և նուաստին որ մարդուս գլուխը կը լեցընէ, առանց միտքն ընդարձակելու, գիտունը կ'ընէ հարուստ ձեռագէտ մի անօգուտ բաներով, և աղքատ գաղափարներով. մեծ՝ պզտիկ բաներու մէջ, և պզտիկ՝ մեծ բաներու մէջ։

Զիմմերման

---

Ոմանք այլ Անտեմոս (Αντεμος) զՆեռն, իբր հակառակող, և այս անուամբ այլ նոյնպէս գումարեն.

| | |
|---|---|
| Α | 1 |
| ν | 50 |
| τ | 300 |
| ε | 5 |
| μ | 40 |
| ο | 70 |
| ς | 200 |
| | 666 |

Ուրիշներ այլ ուրիշ անուններ յարմարցուցեր են։ Իսկ այլք եկեղեցւոյ և կրօնից հակառակող որ և է զօրաւոր մի, այլ և այլ ժամանակս՝ ինչուան և զմեծն Նափոլէոն. Հռովմայ տիրելուն և զՍ. Պապն ի գերութիւն վարելուն համար. ասոր այլ անուան տառերով սկսուած յունարէն միասակար նշանակութեամբ բառեր գտած են. ոմանք այլ ժամանակին թիւը Նեռն անուան յարմարցունել ուզած են, որոյ պատշաճի ըստ դիպաց հայերէն տառից գումարն, բայց մենք կու ճանչնանք զՆափոլէոն յանդուգն աշխարհակալ մի, այլ ոչ անքրիստոնեայ վախճնեալ։

| | |
|---|---|
| Ն | 400 |
| ե | 5 |
| ռ | 1000 |
| ն | 400 |
| | 1805 |

digitised by A.R.A.R.@